ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման և օտարման աճուրդային հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի բաց դասական աճուրդ:

Աճուրդի կազմակերպչի անվանումը - Սպիտակ համայնքի ղեկավար Գագիկ Սահակյան

Աճուրդի կազմակերպման վայրը (հասցեն) - Սպիտակի համայնքապետարան (ք.Սպիտակ, Շահումյան 7)

Աճուրդի անցկացման օրը և ժամը - 2021թ. մարտի 26–ին ժամը 11.00-ին

Աճուրդի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը - 2021թ. մարտի 23-ը, ժամը 11.00-ը

Աճուրդի հաղթողին որոշելու կարգը - Գույքի առավելագույն արժեք առաջարկած մասնակիցն աճուրդավարի կողմից առաջարկված գինը 3-րդ անգամ հայտարարելուց հետո ճանաչվում է աճուրդի հաղթող: Մի քանի մասնակիցների միաժամանակ հավասար չափով գնային հայտ ներկայացրելու դեպքում աճուրդում հաղթող մասնակիցին որոշում է աճուրդավարը վիճակահանությամբ:

Աճուրդով օտարվող գույքի անվանումը, աճուրդի պայմանները, այդ թվում՝ լոտի (լոտերի) անվանումը, լոտի նկատմամբ սահմանափակումները, եթե լոտն առարկա է, ապա նրա ֆիզիկական վիճակը (մաշվածությունը) և (կամ) արտադրման տարեթիվը, լոտի մեկնարկային գինը, լոտի իրավունք լինելու դեպքում՝ այդ իրավունքի գործողության ժամկետը, ինչպես նաև էական այլ պայմանները.

Լոտ-1 – ք. Սպիտակ, ՈՒզբեկական թաղամաս, թիվ 25 հասցեում գտնվող 2888քմ մակերեսով հյուրանոցի և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 06-006-0184-0012 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,755 հեկտար մակերեսով հողամասի բաց դասական աճուրդ: Լոտի մեկնարկային գինը 128 263 292 ՀՀ դրամ, աճուրդային քայլի չափը՝ 6 413 165 ՀՀ դրամ (հողամասի մեկնարկային գնի 5%-ի չափով):

Անշարժ գույքի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն: Հյուրանոցը կառուցվել է 1991թ.-ին:

Աճուրդի մասնակցության հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը

ա. աճուրդի մասնակցության համար սահմանված տեղական վճարի անդորրագիր 10000 ՀՀ դրամի չափով՝ վճարված Սպիտակի համայնքապետարանի 900245161410 հաշվեհամարին,

բ. պետական գրանցման վկայականի և հիմնադիր փաստաթղթերի պատճենները՝ իրավաբանական անձանց համար, ֆիզիկական անձանց համար՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

գ. հայտատուի կողմից տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը),

Աճուրդի մասնակցության նախավճարի չափը, ինչպես նաև նախավճարի վճարման կարգը և ժամկետները, աճուրդում հաղթող չճանաչվելու դեպքում նախավճարի հետ վերադարձման կարգը- Աճուրդի մասնակիցը աճուրդավարի կողմից հաղթող ճանաչվելուց հետո պարտավոր է 30 րոպեի ընթացքում ներկայացնել մասնակցի վկայականն ու վճարել գույքի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով նախավճար՝ 6 413 165 ՀՀ դրամ (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վճարման միջոցներով), որը սահմանված ժամկետում (արձանագրությունը ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում) հետագա վճարումների չկատարման դեպքում չի վերադարձվում և փոխանցվում է համայնքի բյուջե՝ համապատասխան հաշվին: Գնորդը վճարումները կարող է կատարել նաև լիազորված անձի միջոցով: Աճուրդի հաղթողի կողմից վճարված նախավճարը ընդգրկվում է հաղթողի կողմից վճարման ենթակա գումարի մեջ:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը- Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կանոնակարգին կարող են ծանոթանալ Սպիտակի համայնքապետարանում, ինչպես նաև համայնքապետարանի www.spitak.am պաշտոնական կայքում և https://www.arlis.am/ իրավական տեղեկատվական համակարգի ՏԻՄ ակտեր բաժնում (15.12.20 N 295-Ն):

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու, լոտն ուսումնասիրելու և հայտ ներկայացնելու համար դիմել Սպիտակի համայնքապետարան (Շահումյան 7, 2-րդ հարկ, 206 սենյակ):

Լոտն ուսումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը- Հրապարակային ծանուցման պահից մինչև մարտի 23-ը ժամը 11.00-ն՝ յուրաքանչյուր չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-17:00 ընկած

ժամանակահատվածում (բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի), ք. Սպիտակ, Ուզբեկական թաղամաս, թիվ 25:

Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գինը վճարելու կարգը- անկանխիկ՝ բանկային փոխանցմամբ:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ:

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ
ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ